ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան

«18» ապրիլ 2024թ № 1086-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 902-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի փետրվարի 23-ի N 263-Ն որոշման 1.1-ին կետով՝

հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի մարտի 29-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 12-ի N 130 որոշմամբ նախատեսված մաքսային ընթացակարգով ձևակերպելիս Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերին համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթերը ներկայացնելու պահանջը չկիրառելու մասին» N 902-Լ հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.
1) 1-ին կետում «հաստատված ցանկի 1-5-րդ և 7-24-րդ կետերի համար:» բառերը փոխարինել «հաստատված ցանկի.

ա. 1-5-րդ և 7-24-րդ կետերի համար՝ 2024 թվականի ապրիլի 1-ից,

բ. 1-5-րդ, 7-18-րդ և 20-24-րդ կետերի համար՝ 2024 թվականի մայիսի 1-ից,

գ. 1-5-րդ, 8-18-րդ և 20-24-րդ կետերի համար՝ 2024 թվականի հունիսի 1-ից:» բառերով.

2) 2-րդ կետում «տեղակալի պարտականությունները կատարող» բառերը փոխարինել «տեղակալ» բառերով.

3) 3-րդ կետից «պաշտոնական» բառը հանել:

2024-04-18 09:53:01 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ